«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – Անգլերեն

Մասնակից – Մարտիրոսյան Աղավնի

Ղեկավար- Գ. Վարդանյան

Թեմա- Համագործակցային ուսուցման դերը դպրոցում

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1. Համագործակցային ուսուցման էությունը, առանձնահատկություններն ու խնդիրները…….5

2.Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերի պլանավորում և համագործակցային ուսուցման մեթոդներ……..9

3.Համագործակցային ուսուցման տարրերը և դրանց կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ……13

4.Հետազոտական աշխատանք համագործակցային մեթոդով անցկացված դասի վերաբերյալ……..17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... ……20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... …….21

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր դպրոցն անընդմեջ գտնվում է նոր ուղիների զարգացման փնտրտուքների մեջ: Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչներն այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Մեր օրերում շատ կարևոր է գիտելիքների մշակման, յուրացման և կիրառման գործնական հմտությունների ձեռքբերումը և կարողությունների զարգացումը: Դա իր հերթին ենթադրում է սովորողների արդյունավետ համագործակցություն և սովորելու գործընթացը ինքնուրույն կազմակերպելու անհատի կարողությունների զարգացում: Այսպիսով, ուսուցման նպատակն է դառնում սովորել սովորեցնել, որին էլ էապես նպաստում է համագործակցային ուսուցումը, որով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի արդիականությունը: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն:

Հետազոտական աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել համագործակցային ուսուցման տարերրի կիրառումը հանրակրթական դպրոցում, մեծ ուշադրություն սևեռել այդ տարրերի վրա և հնարավորինս առաջնորդվել դրանցով: Վերը նշված նպատակից ելնելով՝ աշխատանքի ***խնդիրներն են.***

- բացահայտել համագործակցային ուսուցման խնդիրն ու էությունը, որպեսզի տեսնենք, թե ինչպիսի առավելությունների և թերությունների հաղթահարման ուղիներ կարող են լինել,
- ուսումնասիրել համագործակցային ուսուցման մեթոդները

- վեր հանել համագործակցային ուսուցման այն տարրերը, որոնք ապահովում են համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, որտեղ ներկայացված է աշխատանքի նպատակը, խնդիրներն ու թեմայի արդիականությունը: Այնուհետև հաջորդում է բուն շարադրանքը, որը նկարագրում է համագործակցային ուսուցման ընդհանուր բնութագիրը, համագործակցային ուսուցման էությունը, խնդիրները, տարրերը, առանձնահատկություններն ու մեթոդները, ինչպես նաև ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ: Աշխատանքն ամփոփվում է գործնական հատվածով համագործակցային մեթոդով անցկացված դասի վերաբերյալ: Գործնական աշխատանքին հաջորդում է եզրակացությունը, որտեղ ամփոփված են աշխատանքի արդյունքները: Եզրակացությունից հետո նշված է գրականության ցանկը, որն օգտագործվել է տվյալ աշխատանքի ուսումնասիրման համար: Ապա հավելվածի մասն է, որտեղ ներկայացված են հավելյալ նյութերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1 Համագործակցային ուսուցման էությունը, առանձնահատկություններն ու խնդիրները

Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակված իմաստության գիտակցման արվեստն է: Հասարակության մեջ ուսուցչին մասնագիտական կարգավիճակ է տրվում: Նրանից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով: Այլևս բավարար չէ երեխաների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը, ոչ էլ սոսկ ըմբռման, անձնական նախընտրության կամ ավանդական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը: Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնց արդյունվետության մեջ համոզվել են գործնականում: Այսպիսով, փորձենք ներկայացնել մեթոդներից մեկը, որը աչքի է ընկնում իր արդյունավետությամբ և աշակերտների ուշադրությունը գրավվելու իր կարողությամբ:

Բայց նախքան համագործակցային ուսուցման բուն տարրերին անցնելը՝ փորձենք բնութագրել համագործակցային ուսուցում հասկացությունը:

Համագործակցային ուսումնառությունը դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն է, որի դեպքում աշակերտների փոքր խմբերը համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ խնդրի լուծման համար: Համագործակցային ուսումնառությունը համատեղ ուսումնառության մի տեսակ է: Այն ներառում է խմբային ուսումնառության բազմապիսի տարբերակներ, ինչպիսիք են համագործակցային ուսուցումը հասակակիցների խմբերում, ուսուցիչ-աշակերտ հետազոտական ծրագրերի իրականացումը, «բզզացող» խմբերով /buzz groups/ կարճաժամկետ աշխատանքը, սովորողների համայնքների կազմակերպումը և այլն [3]:

Համագործակցային ուսուցման/ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդավարական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Համագործակցային ուսումնառության պատմության մեջ մյուս կարևոր դեմքը սոցիալ-հոգեբանության մասնագետ Քըրթ Լևինն է, որը 1930-40-ական թվականներին

ժողովրդավարական խմբերի ղեկավարների ու անդամների վարքագիծը հասկանալու գործում կորևորել է խմբային աշխատանքի դինամիկայի նշանակությունը [9]:

Քննադատական մտածողության, արժանապատվության զարգացման, միջէթնիկական հարաբերությունների, հասարակամետ վարքագծի և շատ այլ չափանիշների վրա համագործակցային ուսումնառության դիտարկումներն ու վերլուծություններն աներկբայորեն ցույց են տվել, որ այս մեթոդը դասավանդման ավանդական ձևերից առավել գերադասելի է և հազվադեպ է զիջում դասավանդման այլ տեսակներին:

Համագործակցային ուսումնառության մեթոդները կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ.

1.Երբ ինքներդ աշակերտ էիք, համատեղ աշխատելու կամ սովորելու գործընթացում ի՞նչն էր ամենից շատ դուր գալիս ձեզ, իսկ ի՞նչը՝ ոչ:

2.Ի՞նչ կարող են աշակերտները սովորել համատեղ աշխատելու դեպքում:

3.Համատեղ ուսումնառության ո՞ր կողմերն են հատկապես արդյունավետ:

Ուսոցչակենտրոն մեթոդով վարվող դասերի ընթացքում ուսուցիչներն աշխատում են հիմնականում ամբողջ դասարանի հետ, կամ էլ ուսումնասիրվող թեմայի, նյութի բովանդակության որևէ հատվածը յուրացնելու համար աշակերտներն անհատական աշխատանք են կատարում: Այդ դասերի նպատակն ու կառուցվածքն հիմնված են անհատական մրցակցության և ջանքերի վրա: Մինչդեռ համագործակցային ուսումնառության դեպքում աշակերտներին խրախուսում և նրանցից պահանջում են միասին աշխատել որևէ ընդհանուր առաջադրանքի վրա: Համագործակցային ուսումնառությամբ վարվող դասերը բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

1.Ուսումնական նպատակների իրականացման համար աշակերտներն աշխատում են թիմերով.

2.Թիմերում ընդգրկված են ուժեղ, միջին և թույլ աշակերտներ:

3. Խրախուսվում է ամբողջ թիմը և ոչ թե որևէ անհատը:

Համագործակցային ուսումնառությունը կարող է օգտակար լինել թե՛ ցածր, թե՛ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար, ընդ որում՝ առավել ուժեղ աշակերտներն օգնում են մյուսներին: Համագործակցային ուսումնառությունը աշակերտներին հնարավորություն է ընձեռում նաև աշխատել փոխադարձ կախվածության պայմաններում, ինչպես նաև սովորել գնահատել միմյանց: Համագործակցային ուսումնառության նպատակներից մեկն էլ աշակերտներին համագործակցության և համատեղ աշխատանքի հմտություններով «զինելն»է:

Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերը վարելու 6 հիմնական քայլերն են.

1. Դասի նպատակների հստակ սահմանում:

2. Սովորելու շահագրգռվածության ապահովում /շարժառիթ, դրդապատճառի ստեղծում/:
3. Տեղեկատվության մատուցում:
4. Աշակերտների բաժանումը թիմերի /համագործակցային խմբերի ստեղծում/:
5.Ուսուցչի աջակցությամբ աշակերտների թիմային աշխատանքի կազմակերպում:
6. Թիմային աշխատանքի վերջնական արդյունքի ներկայացում:

Այսպիսով, համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Համագործակցային ուսուցումը, որ մշակվել է մանկավարժների կողմից, ուսուցիչների և աշակերտների հարաբերությունները դիտարկում է նոր մակարդակում՝ առավել մարդասիրական ու վստահության հիմքերի վրա: Այն հիմնվում է ոչ թե առանձին սովորողների մրցակցության, այլ նրանց համատեղ աշխատանքի վրա: Որպեսզի համագործակցային ուսուցումը արդյունավետ լինի, անհրաժեշտ է ուսումնասիրել դրա առանձնահատկությունները:

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են առնվազն երեք գաղափար[10]: Ջոնսոնները, որպես այդպիսիք,առանձնացնում են սոցիալական փոխկախվածությունը, ճանաչողական զարգացումը և վարքագծային ուսումնառությունը:

Սոցիալական փոխկախվածության գաղափարի հիմքում ընկած են խմբային զարգացման ուղղությամբ Կուրտ Կաֆկայի և Կուրտ Լևինի կատարած հետազոտությունները: Նրանք առաջարկեցին խումբը դիտարկել որպես մի դինամիկ ամբողջություն, որտեղ կարևորվեց ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը: Ըստ Լևինի՝ հենց այդ փոխկախվածությունն է տանում դեպի «դինամիկ ամբողջություն», քանզի խմբի անդամներից որևէ մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ այդ ներխմբային լարվածությունը տանում է դեպի խմբային ընդհանուր նպատակի իրականացմանը [3]:

Ճանաչողական տեսության զարգացման հիմքում ընկած են Պիաժեի, Վիգոտսկու և Բրունների հետազոտությունները: Պիաժեն պնդում էր, որ երբ անհատները համագործակցում են միջավայրում, ապա տեղի է ունենում սոցիալ-ճանաչողական հակասություն, ինչը հանգեցնում է հավասարակշռության խախտման: Վերջինս էլ իր հերթին խթանում է հեռանկարը տեսնելու կարողությունը և ճանաչողական զարգացումը:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա տարածմանը նպաստող գործոններից են

բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ.

1. Խմբի անդամների գիտակցված ստեղծագործական համագործակցություն:
2. Մասնակիցների ակտիվ ստեղծագործական հարաբերություններ:
3. Համատեղ աշխատանքին գիտակցական մասնակցություն և պատասխանատվություն՝ ընդհանուր գործի հաջողության համար:
4. Զույգով կամ փոքր խմբով աշխատելու հմտություններ:
5. Արդյունավետության բարձրացման նպատակով խմբի ներսում աշխատանքի ընթացքի մասին քննարկումների պարբերաբար կազմակերպում:

Համագործակցային ուսուցմամբ դասերի կազմակերպման ժամանակ ուսուցիչը պետք է լուծի վեց հիմնական խնդիր.

1. Որոշել դասի նպատակները:
2. Կատարել նախապատրաստական աշխատանք, որը ներառում է՝

ա/խմբերի ձևավորում

բ/դասասենյակի նախապատրաստում

գ/խմբի ներսում մասնակիցների դերի որոշում

3. Ներկայացնել առաջադրանքը՝ ինչ են կատարելու, ինչ նպատակով, ինչ արդյունքներ են ակնկալվում և խմբերին տալ հանձնարարություն:
4. Օգնել աշակերտներին սկսել աշխատանքը խմբի ներսում:
5. Հետևել աշխատանքի արդյունավետությանը, միջամտել միայն անհրաժեշտ դեպքերում:
6. Գնահատել աշակերտների մասնակցությունը, լսել խմբի անդամների կարծիքը սեփական աշխատանքի և խմբի ներսում աշակերտների հետ համագործակցության վերաբերյալ:

2. Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերի պլանավորում և համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային ուսումնառության մեթոդով վարվող դասերի նախապատրաստումը տարբերվում է դասերի այլ տեսակների պլանավորումից: Այն պահանջում է առանձնահատուկ մոտեցում և մի շարք մասնագիտական հմտություններ, որոնցից մի քանիսը ներկայացնենք ստորև:

Համագործակցային ուսուցման մեթոդները

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:

Դրանք են՝

- ***Աշակերտների թիմային առաջադիմություն,***
- ***Խճանկար,***
- ***Շրջագայություն պատկերասրահում,***
- ***Խմբային հետազոտության մեթոդները***
- ***Կառուցվածքային մոտեցում***

Աշակերտների թիմային առաջադիմության խմբավորումներ

Student Teams Achievement Divisions. /STAD/

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը համարվում է առավել հեշտ մեթոդներից մեկը և օգտակար է այն ուսուցիչների համար, որոնք նոր են սկսում կիրառել համագործակցային ուսուցման մեթոդները: Այս մեթոդը խթանում է համագործակցությունը և մասնակցությունը: Կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ [15]:

Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվում են գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտները: Հնարավորության դեպքում խմբերում ապահովվում են տղա-աղջիկ հավասարությունը: Խմբային այսպիսի ձևավորումը կոչվում է տարասեռ [14]:

Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն: Նշվում է, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացնում է նյութը:

Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում թիմի անդամներն այլևս չեն կարող օգնել միմյանց: Յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով ներդրում է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում: Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ գնահատվում է ինչպես աշակերտի, այնպես էլ խմբի առաջադիմությունը:

Խճանկար(Ջիգսաw,Jigsaw)

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորանում են նյութի որոշակի ասպեկտի մեջ: Խճանկարն ունի հետևյալ փուլերը՝

1.Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում - երբ աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:

2.Աշխատանք փորձագիտական խմբում- փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը:

3.Աշխատանք ուսումնական խմբում-յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

4.Ավարտական աշխատանք-աշակերտներն անհատական ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:

5.Ամփոփում-արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Շրջագայություն պատկերասրահում

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Այս մեթոդով խմբեր կազմելու ձևը կոչվում է համասեռ:

1. Ուսուցիչն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս է դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այս դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

2. Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ընտրված մասերի վրա և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն:

3. Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:

4. Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը և կազմում 4 նոր խումբ՝ ըստ իրենց համարների:

5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ, ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ

Group Investigation

Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների, խմբային հետազոտության մյուս հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Մեթոդի էությունն հետևյալն է.

Ուսուցիչը դասարանը բաժանում է 5 կամ 6 անդամ ունեցող խմբերի: Վերջիններս թեմաներ են ընտրում իրենց ուսումնասիրության համար, աշխատում, այնուհետև զեկույց են պատրաստում ու ներկայացնում ամբողջ դասարանին: Մեթոդի հեղինակներ Շարանը և նրա գործընկերները առանձնացնում են խմբային հետազոտության հետևյալ վեց քայլերը [Ս. Վարդումյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Վարելլա 2003: 179].

1.Թեմայի ընտրություն: Սովորողներն ուսուցչի կողմից հանձնարարված ընդհանուր խնդրի շրջանակներում առանձին ենթաթեմաներ են ընտրում:

2. Համատեղ պլանավորում: Սովորողները պլանավորում են առաջադրանքներն ու նպատակները:

3. Իրագործում: Սովորողները իրագործում են մշակված ծրագիրը:

4. Վերլուծություն և համադրում: Սովորողները վերլուծում և գնահատում են իրենց ձեռք բերած տեղեկատվությունը:

5.Վերջնական արդյունքի ներկայացում:

6.Գնահատում: Սովորողներն ու ուսուցիչը գնահատում են յուրաքանչյուր խմբի ներդրումը ամբողջ դասարանի աշխատանքի արդյունքում:

Կիրառելով խմբային հետազոտության մեթոդը՝ ուսուցիչը կարող է հետապնդել երեք փոխկապակցված նպատակ՝

1. Խմբային հետազոտությունը աշակերտներին սովորեցնում է համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները:
2. Աշակերտները խորությամբ են յուրացնում ուսումնական նյութի բովանդակությունը:
3. Աշակերտները սովորում են համագործակցել՝ խնդիրը հետազոտելու ընթացքում:

Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգացնում են հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ:

Կառուցվածքային մոտեցում

The structural approach

Այս մոտեցումը, որը մշակվել է Սպենսեր Կագանի կողմից, ընդգծում է աշակերտների միջև շփման ձևերի վրա ազդող կառույցների կիրառումը: Այս կառույցներն աշակերտներին պարտադրում են աշխատել փոքր խմբերով, փոխկախվածության պայմաններում և անահատականացված խրախուսանքի փոխարեն սովորաբար պարգևի են արժանանում համագործակցային աշխատանքը: Ստորև ներկայացնենք այդպիսի կառույցների մի քանի օրինակներ.

«Մտածի՛ր-զույգ կազմի՛ր- գաղափարներդ կիսի՛ր»

Այս մեթոդն առաջացել է համագործակցային ուսումնառությանը և սպասման ժամանակին /wait-time/ առնչվող հետազոտությունների արդյունքում: Այն նեռառում է 3 փուլ: Ենթադրենք՝ ուսուցիչը ներկայացրել է մի կարճ զեկույց-դասախոսություն կամ աշակերտներն ավարտել են առաջադրանքի ընթերցումը: Այժմ ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտներն առավել հանգամանալից և համակողմանի քննության առնեն հենց նոր բացատրված կամ յուրացրած նյութը: Այդ նպատակով նա խմբային հարցուպատասխանի փոխարեն նախապատվությունը տալիս է «մտածի՛ր- զույգ կազմի՛ր- գաղափարներդ կիսի՛ր » ռազմավարությանը, որը ներառում է հետևյալ հաջորդական քայլերը.

Քայլ 1-ին. «Մտածի՛ր»: Ուսուցիչը դասի թեմային առնչվող հարց է արծարծում և աշակերտներին հանձնարարում մեկ րոպե լուռ մտածել պատասխանի մասին:

Քայլ 2-րդ. «Զույգ կազնի՛ր»: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին մտածում /4-5 րոպե/:

Քայլ 3-րդ. «Գաղափարներդ կիսի՛ր»: Այժմ զույգերն ամբողջ դասարանի հետ են կիսում իրենց քննարկման արդյունքները: Ուսուցիչը տարբեր զույգերի է հրավիրում և քննարկումը շարունակում այնքան ժամանակ, մինչև խոսելու և սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու հնարավորությունից օգտվեն մասնակիցների կեսից ավելին:

3. Համագործակցային ուսուցման տարրերը և դրանց կիրառումը հանրակրթական դպրոցում, ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

Այսօր կրթական համակարգը ճգնաժամային իրավիճակ է ապրում:Կրթական ստանդարտների բացակայությունը, իրավական նորմերի և վերահսկման հասարակական-պետական միջոցների ու ձևերի անկատարությունը դանդաղեցնում են համակարգի առաջխաղացումը: Ահա առաջ է գալիս կրթության որակի հիմնախնդիրը, որը դառնում է լուրջ քննարկումների առարկա թե՝ մանկավարժների շրջանում, և թե՝ գիտական, տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտներում:

Շուտով առաջ է գալիս կոլեկտիվ ուսուցման հարցը: Այն մեծ հնարավորություններ է ստեղծում զարգացնելու խմբում աշխատելու, մարդկանց հետ շփվելու, իրենց առջև նպատակներ դնելու և դրանց հասնելու, համատեղ որոշումներ կայացնելու աշակերտների ունակությունները: Միևնույն ժամանակ այն զարգացնում է յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը և ուժեղացնում նրա պատասխանատվության զգացումը: Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում ուսումնական հաղորդակցման տարբեր կարողությունների ձևավորման աշխատանքներին: Այդպիսի կարևոր կարողություններց մեկը երկուսով աշխատելու կարողությունն է, քանզի զույգում սովորում են համատեղ աշխատել, ուսումնասիրել, քննարկել տրվող նյութը, փոխուսուցանել, ստուգել: Այս կարողությունների օգտագործման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ:Իսկ այդ պայմաններից մեկը եղավ համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը:

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այս տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Ավելին, հենց այս տարրերն են, որ ապահովում են համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում:

Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են.

- *դրական փոխկախվածություն,*
- *դեմ առ դեմ փոխազդեցություն,*
- *անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,*

- *միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,*
- *խմբային գործընթաց կամ մշակում:*



Հետագայում այս տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը *փոխներգործուն առաջադրանքը* դիտարկեց որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Այս տարրը ապահովում է համապատասխան պայմաններ մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար: Այժմ քննարկենք այս տարրերն առանձին-առանձին:

Դրական փոխկախվածություն

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումը: Սովորաբար ուսուցման ընթացքում խմբի անդամների միջև փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով՝

1.Մրցակցային. երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ: Նման մրցակցային իրավիճակում կարող են լինել և՛ հաղթողներ և՛ պարտվողներ: Արդյունքում մրցակցությունը կարող է խափանել խմբի կայացման ընթացքը՝ խոչնդոտելով նպատակներին հասնելու համար համատեղ ջանքերի գործադրմանը [1]:

2.Անհատական. սոցիալական փոխկախվածությունը կարող է վերանալ, որի արդյունքում խմբի անդամները առկախվում են իրենց խմբակիցների հաջողություններից կամ ձախողումներից: Խմբային աշխատանքի ժամանակ նման բան տեղի է ունենում այն դեպքում, երբ յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը, որը կապ չունի մնացածների առաջադրանքների հետ:

3.Համագործակցային. խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար և գիտակցում, որ իրենք կարող են դրան հասնել միայն այն

դեպքում, երբ խմբի բոլոր անդամները հասնեն իրենց նպատակներին: Սա դրական փոխկախվածություն է և համագործակցային ուսուցման առաջին կարևոր առանձնահատկությունը: Երեք հրացանակիրների ***«Մեկը՝ բոլորի, բոլորը մեկի համար»*** նշանաբանը դրական փոխկախվածության լավագույն օրինակ է: Կարելի է ասել, որ դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման «սիրտն» է: Որքան ավելի ուժեղ է դրական փոխկախվածությունը, այնքան ավելի արդյունավետ կլինի համագործակցային ուսուցումը: Շատ դեպքերում դասարանում ակնհայտ է դրական փոխկախվածության առկայությունը, երբ աշակերտները աշխատում են փոքր խմբերով՝ փոխանակելով մտքեր, միմյանց տրամադրելով օգնություն և ցուցաբերելով նվիրվածություն: Խմբերում դրական փոխկախվածություն ստեղծելու համար ուսուցիչը պետք է տա խմբային ընդհանուր նպատակ հետապնդող առաջադրանքներ:

Դրական փոխկախվածությունը ավելի է հզորանում, երբ խմբի անդամներին տրվում են պարգևատրումներ, համատեղ ռեսուրսներ և սահմանված դերեր [3]:

Դրական փոխկախվածությունն ինքնաբերաբար չի առաջանում: Ահա թե ինչու է անհրաժեշտ, որ ուսուցիչն ուշադրությունը կենտրոնացնի այն կանոնների և սկզբունքների վրա, որոնք խմբերում խթանում են դրական փոխկախվածություն: Գոյություն ունեն բազմաթիվ գործնական ձևեր և կանոններ, որոնք ուսուցինչը կարող է կիրառել խումբը կառուցելու և դրական փոխկախվածությունը խմբերում խթանելու համար: Առավել հաճախ են կիրառվում հետևյալ ձևերը՝

- *Փոխկախվածություն ըստ խմբային նպատակների.* համոզվելու համար,որ աշակերտներն իրոք պատրաստ են միասին աշխատելու և որ իրենց համար իսկապես կարևոր է, թե ինչպես են սովորում իրենք և իրենց խմբի անդամները, ուսուցիչը պետք է խմբերի համար մշակի համատեղ ուսուցման հստակ նպատակներ: Ուստի շատ կարևոր է, որ տվյալ խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցի իր առջև դրված առաջադրանքի նպատակները և որ դա իր խմբի բոլոր անդամների համատեղ նպատակն է: Կարևոր է նաև, որ առաջադրանքը կատարելու համար խմբին տրվի բավարար ժամանակ՝ առաջադրանքի նպատակները հասկանալու և դրանց հասնելու համար:
- *Դերային փոխկախվածություն.* երբ պատասխանատվությունը բաշխվում է խմբի անդամների միջև: Ուսուցիչը կարող է խմբի յուրաքանչյուր անդամին տալ համապատասխան դեր՝ ուժեղացնելով համախմբվածությունը խմբում:
- *Ռեսուրսային փոխկախվածություն.* առաջանում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է կիսել կամ բաշխել ունեցած միջոցները:
- *Փոխկախվածություն ըստ հաջողության.* երբ հաջողության դեպքում խումբը ստանում է մեկ մրցանակ:

- *Փոխկախվածություն ըստ արդյունքի.* առաջանում է այն ժամանակ, երբ յուրաքանչյուրը գիտի, որ կհասնի իր նպատակին միայն այն դեպքում, երբ մյուսները նույնպես հասնեն իրենց նպատակներին:

Ամփոփելով դրական փոխկախվածության կարևորությունը համագործակցային ուսուցման ընթացքում՝ պետք է նշել, որ այս տարրի ապահովման շնորհիվ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ: Սովորողներն իրենց նպատակին ավելի հեշտությամբ են հասնում, երբ աշխատում են միասին, քան առանձին-առանձին: Այս տարրը նպաստում է նաև խմբում հանդուրժողականության և վստահության մթնոլորտի ձևավորմանը:

Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն

Երբ խմբերում ստեղծվել է դրական փոխկախվածություն, անհրաժեշտ է առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը՝ օգնելով, խրախուսելով, գովաբանելով միմյանց սովորելու ջանքերը: Դրական փոխկախվածությունը հանգեցնում է դրական/խթանող փոխազդեցության, ինչը համագործակցային ուսուցման երկրորդ կարևորագույն տարրն է: Այս դեպքում խմբի անդամները աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով, որն ապահովում է խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին: Այս տարրը հիմնականում ունի տեխնիկական բնույթ և այն ապահովելու համար խմբի անդամները պետք է նստեն դեմ-դիմաց և հաղորդակցվելիս տեսնեն միմյանց: Հաճախ այն անվանում են «համագործակցային» կամ «միասին սովորելու» դիրք: Խթանող փոխազդեցության արդյունքում սովորողները՝

- համագործակցում են ավելի արդյունավետ,
- փոխանակում են անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- համատեղ մշակում և վերլուծում են ինֆորմացիան,
- ապահովում են հետադարձ կապ՝ խմբի հետագա աշխատանքի բարելավման նպատակով,
- քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

4 Հետազոտական աշխատանք համագործակցային մեթոդով անցկացված դասի վերաբերյալ

Սույն վերապատրաստման դասընթացի հետազոտական աշխատանքի թեման լինելով՝ **«Համագործակցային ուսուցման դերը հանրակրթական դպրոցում»,** Նորաբացի Մ. Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում կատարվել է հետազոտական աշխատանք, որտեղ, ինքս շեշտը առավելապես դրել էի համագործակցային ուսուցման մեթոդի վրա, և մի քանի դասաժամ անցկացրել այս մեթոդով: Ահա անցկացրած դասերից մեկի նկարագրությունը և արված եզրակացությունները:

Դասաժամի թեման էր **"Let's read William Shakespeare":** Ըստ վերնագրի՝ դասի բովանդակությունն էր Շեքսպիրի կյանքի և ստեղծագործական գործունեության ուսումնասիրությունը: Բնականաբար տվյալ դասն ուներ իր ակնկալիքներն ու նպատակները, այն է՝ ծանոթանալ հանճարի կյանքին և հայտնի ստեղծագործություններին, գիտակցել նրա դերն ու ներդրումը գրականության մեջ: Այս ամենը բարձրաձայնեցի, որպեսզի երեխաներն ունենան դասի հստակ ձևավորված նպատակներ: Ելնելով աշակերտների անհատական կարողություններից՝ սահմանեցի որոշակի առաջադրանք: Նախքան առաջադրանքը հանձնարարելը՝ աշակերտներին բաժանեցի խմբերի: Դասարանը բաղկացած էր 30 հոգուց: Նրանց հանձնարարեցի հաշվել մինչև 4-ը: Բոլոր 1-երը կազմեցին առաջին խումբը, 2-ները՝ 2-րդը, իսկ 3-ները՝ 3-րդ խումբը, 4-ներն էլ 4-րդ խումբը: Արդյունքում ստացվեցին 7 հոգանոց խմբեր: Հանձնարարեցի խմբերին զբաղեցնել իրենց տեղերն ամեն շարքում՝ նստելով դեմ-դիմաց: Այնուհետև սահմանեցի առաջադրանքը. տվյալ տեքստը բաժանեցի 4 մասի և ամեն խմբին տվեցի մեկ հատված կարդալու և այն մեկնաբանելու համար: Խմբերին տվեցի 20 րոպե ժամանակ առաջադրանքը կատարելու համար: Սակայն նախքան աշխատանքը սկսելը պատահական կարգով ամեն խմբում կատարեցի դերաբաժանում: Մեկը պետք է լիներ ընթերցողի դերում, ով ընթերցելու էր առաջադրանքը, ստուգեր արդյոք խումբն այն ամբողջովին ըմբռնել է, թե ոչ: Մյուսը պետք է լիներ ժամանակին հետևողի դերում, ով հետևելու էր, որ խումբն ավելորդ ժամանակ չվատներ և այն շահավետ օգտագործեր: 3-րդը պետք է լիներ գովաբանողի դերում, ով պիտի գովաբաներ խմբի յուրաքանչյուր անդամի լավ աշխատանքը, իսկ մեկն էլ պետք է լիներ դիտորդի դերում, ով հետևելու էր խմբի անդամների գործողություններին: Նշեցի նաև մի շատ կարևոր փաստ, որ աշխատանքի վերջում պատահական կարգով ընտրելու եմ խմբի անդամներից որևէ մեկին՝ ողջ խմբի կատարած աշխատանքը ներկայացնելու համար: Այս քայլը ձեռնարկեցի, որպեսզի աշակերտներից յուրաքանչյուրն ունենա պատասխանատվության զգացում: Որպես խրախուսման ձև՝ խմբերի համար սահմանեցի որոշակի նոմինացիաներ, դրանք էին՝ «խելացի խումբ», «աշխատասեր խումբ» և «կարգապահ խումբ»: Ակնհայտ էր, որ այս նոմինացիաները էլ ավելի ոգևորեցին նրանց և մղեցին միահամուռ աշխատելու: Այս ամենը

հստակեցնելուց հետո աշակերտները սկսեցին իրենց աշխատանքները: Նրանց աշխատելու ընթացքում ես պարբերաբար մոտենում էի խմբերին և հետևում ընթացիկ աշխատանքներին:

Աշխատանքի ավարտին պատահականորեն ընտրեցի խմբերից որևէ մեկին, կանչեցի նրանց գրատախտակի մոտ և խնդրեցի ներկայացնել խմբերի աշխատանքները: Ապա բոլոր խմբերի միջև կատարեցի հարցում, թե որքանով խմբերի անդամներից յուրաքանչյուրը կատարեց իրեն տրված դերը: Արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը՝ խմբերի անդամներից յուրաքանչյուրը ընթերցողի դերը կատարել էր 92%-ով, ժամանակին հետևողի դերը 80%-ով, խրախուսողինը՝ 90%-ով, իսկ դիտորդինը՝ 75%-ով: Հարցումից հետո պարզվեց, որ ժամանակին հետևելու հրահանգը այդքան էլ չիրականացավ, քանի որ պատճառը աշակերտների ոգևորվածությունն ու ակտիվությունն էր, հետևաբար դիտորդը ևս մի փոքր անտարբերություն ցուցաբերեց այդ նույն պատճառով: Քննարկվեցին և վերլուծվեցին բոլոր թերությունները, որպեսզի հաջորդ անգամ միասին աշխատելիս նրանք էլ ավելի մեծ ուշադրություն դարձնեն այդ թերի կողմերի վրա և փորձեն շտկել դրանք: Ապա խմբերը ստացան համապատասխան նոմինացիաներ՝ որպես աշխատանքի գնահատում և խրախուսում:

Ահա այս տեսակի համագործակցային դասի շնորհիվ հասկացա, թե որքան կարևոր ու արդյունավետ է համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը հանրակրթական դպրոցում: Փորձել եմ հնարավորինս կիրառել տարրերից յուրաքանչյուրը:

Աշխատանքի ընթացքում առկա էր դրական փոխկախվածության տարրը, քանզի նրանցից յուրաքանչյուրն էլ գիտակցում էր, որ իրենք կախված են մեկը մյուսից և որ «սուզվելու կամ լողալու են միասին»: Կար նաև դեմ առ դեմ փոխազդեցության տարրը, որն այն փաստն էր, որ աշակերտները նստել էին դեմ-դիմաց, որն էլ ավելի էր հեշտացնում միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Անհատական հաշվետվության և պատասխանատվության տարրն ակնհայտորեն առկա էր: Դա հատկապես երևաց այն ժամանակ, երբ աշակերտները ստացան իրենց հասանելիք դերերը, և երբ հայտարարվեց, որ պատահական կարգով ընտրվելու է խմբերից որևէ անդամ ողջ խմբի աշխատանքը ներկայացնելու համար: Սա, բնականաբար, նրանց ավելի պատասխանատու դարձրեց: Աշակերտներն աշխանատքի ընթացքում ձևավորել էին միմյանց աջակցելու և վստահելու մթնոլորտ, ինչը և վկայում էր սոցիալական հմտությունների առկայության մասին: Կար նաև խմբային գործընթաց և մշակում, որը երևաց խմբի աշխատանքի վերջում, երբ նրանք քննարկեցին իրենց կատարած աշխատանքի լավ և վատ կողմերը՝ հաջորդ անգամ դրանք շտկելու ակնկալիքներով: Իսկ առաջադրանքի փոխներգործուն կառուցվածք ունենալը բնականաբար կախված էր հիմանակնում ինձանից, որը ես կազմեցի՝ աշակերտների

կարողություններից ելնելով: Առաջադրանքը այնպիսին էր, որ թույլ էր տալիս երեխաներին ազատ արտահայտվելու, մտքեր փոխանակելու և որոշումներ կայացնելու:

Ահա այս բոլոր տարրերի առկայությունն է, որ օգնում է աշակերտներին հասնել համագործակցության բարձր մակարդակի և ապահովել այդ համագործակցությունը դասի բոլոր փուլերում: Այսպիսով, ևս մեկ անգամ համոզվեցի, որ համագործակցային ուսուցման այսպիսի մեթոդների կիրառումը բավականին օգտավետ է, քանի որ այն հնարավորություն է տալիս աշակերտներին ներգրավվելու դասի մեջ, ջանքեր ներդնելու՝ ցանկալի արդյունքին հասնելու համար:

Վերապատրաստման դասընթացի հետազոտական աշխատանքի ընթացքում մի քանի դասաժամ համագործակցային մեթոդով անցկացնելուց հետո, աշակերտներին տրվեց իմ կողմից մշակված հարցաթերթիկ, որի նպատակն էր պարզել, թե աշակերտները ինչպիսի մոտեցում, տեսակետ ունեն համագործակցային մեթոդով անցկացվող դասերի վերաբերյալ, որքանով է տվյալ մեթոդը նպատակահարմար կիրառել հանրակրթական դպրոցներում և ինչ առավելությունների և թերությունների նրանք հանդիպեցին դասաժամերին:

Հարցման արդյունքներից հնարավորինս անկեղծ պատասխաններ ակնկալելու համար բոլոր հարցաթերթիկներն անանուն են եղել: Հարցաթերթիկները լրացվել են նրանց կողմից և այնուհետև ենթարկվել անհրաժեշտ վերլուծության: Հարցմանը մասնակցել է 30 աշակերտ:

Այսպիսով հարցաթերթիկերի արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ համագործակցային մեթոդով անցկացրած դասերը նրանց դուր է եկել, կային նաև աշակերտներ, ովքեր այլ մեթոդներով ևս կցանկանային աշխատել, որոնց մասին նրանք ևս գրել էին հարցաթերթիկներում:

Հարցաթերթիկների արդյունքների ամփոփումից հետո նրանց հետ կիրառեցի զրույցի մեթոդը, որի ժամանակ առավել շատ տեղեկություն ստացա նրանցից: Աշակերտները բարձրաձայնեցին այն առավելությունների ու թերությունների մասին, որոնց հանդիպել էին համագործակցային մեթոդով դասերի անցկացման ժամանակ, միևնույն ժամանակ նշեցին այն մասին, որ թերությունները գլխավերապես փորձի պակասի արդյունք էին և դրանք կարելի է շտկել տվյալ մեթոդը առավել հաճախ կիրառելու դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացի ընթացքում ուսումնասիրելով «Համագործակցային ուսուցման դերը հանրակրթական դպրոցում» վերնագրով հետազոտական աշխատանքը՝ մենք հանգեցինք հետևյալ եզրակացության.

- Համագործակցային ուսուցումը մղում է աշակերտներին ավելի լավ սովորելու: Հնարավորություն է տալիս նրանց ներգրավելու դասի մեջ, ազատ արտահայտվելու և մտքեր փոխանակելու:
- Այն զարգացնում է յուրաքանչյուր երեխայի անհատականությունը և ուժեղացնում նրա պատասխանատվության զգացումը:
- Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը:
- Համագործակցային ուսուցումը պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:
- Հմագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործումը հնարավորություն է տալիս խմբերին հասնել համագործակցության բարձր մակարդակի:
- Անձի մեջ ձևավորում է որոշակի որակներ ինչպիսիք են՝ հանդուրժողականությունը, միմյանց հանդեպ հարգանքը և վստահությունը:

Ամփոփելով նշենք, որ համագործակցային ուսուցման տարրերով առաջնորդվելը ուսումնառության գործընթացը դարձնում է ավելի հետաքրքիր՝ նպաստելով սովորողների համար հավասար մասնակցության հնարավորությունների ստեղծմանը: Այս ընթացքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ է լավ ընկալել համագործակցային ուսուցման նպատակներն ու խնդիրները՝ համագործակցային ուսուցման էությունը աշակերտներն ճիշտ բացատրելու նկատառումով:

Արդյունքում ևս մեկ անգամ հաստատվեց, որ համագործակցային ուսուցման տարրերի շնորհիվ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակի հասնելուն: Այն նաև նպաստում է դասարանում հանդուրժողականության ու վստահության մթնոլորտի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այրեքս, Երևան 2001:

2. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ, Համագործակցային ուսուցումը Հայաստանում, Երևան, Անտարես, 2006:

3. Վարդումյան Ս., Հովհաննիսյան Ա., Վարելլա Գ., ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական զարգացում, Երևան, Նոյան Տապան , 2003:

4. Выготскый Л.С. Игра и ее роль в психологическом развитии ребенка: – М., 2006.

5. Григорьев В.М. Народная педагогика игры: Вопросы методологии и теории. – Часть 1.- М: ОДИ – International, 2006.

6. Драйден Гордон, Вос Джанет. Революция в обучении научить мир учиться по- новому. Пер. с англ.- М. ПАРВИНЭ, 2003.

7. Изучение мотивации поведения детей и подростков/ Под ред. Л.И. Божович, Л.В. Благонадежной. – М. Педагогика, 1992.

8. Колесникова М.М. Игры на уроке.- Минск, 1990.

9. Маркова А.К. Формирование мотивации учения в школном возрасте: Пособие для учителя. – М: Просвещение, 1983.

10. Мотивация учения/ Под ред. М.В. Матюхиной. –Волгоград, 1996.

11. Мкртчян М.А. О проблеме понимания в комуникации,// Организационно- деятельностные игры в образовании. Красноярск, РИО КГПУ, 2001.

12. Современные технологии обучения. Методическое пособие по использованию интерактивных методов в обучении/ Под ред. Г.В. Борисовой, Т.Ю Аветовой и Л.И. Косовой.- “ Полиграф- С”, 2002.

13. Сливаковская А.С. Игра – это серезно- М: Педагогика, 2001.

14. Slavin R. E., ”Coorperative Learning:Theory,Research and Practice”, Boston:Allyn & Bacon, 1995.

15. Johnson D., Johnson R., ”The Role of Cooperative Learning in Communicating”, Minnesota, 1994.

16 .Մրցակցային և համագործակցային ուսուցման ձևերի հարաբերակցությունը http://www.behavioradvisor.com/CoopLearning.html

17 Համագործակցային ուսուցման կիրառման նպատակահարմարությունը հանրակրթական դպրոցներում http://www.teachervision.fen.com/cooperative-learning/resource/48649.html

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ

18.10.2021

Առարկան՝ անգլերեն

Դասարան 8-րդ Տևողությունը 45 րոպե

Դասի թեման՝ “Let’s read William Shakespeare”

Դասի նպատակը և խնդիրները՝ ծանոթանալ հանճարի կենսագրությանը և ստեղծագործական գործունեությանը, գիտակցել նրա ունեցած ներդրումը գրականության մեջ: Համագործակցային քննարկման միջոցով պարզել, թե աշակերտները որքանով են յուրացրել դասը, միևնույն ժամանակ համագործակցային մեթոդը կիրառելով աշակերտների մեջ սերմանել համատեղ, թիմային աշխատանքի հմտություններ, միմյանց լսելու, աջակցելու, միմյանց տեսակետը պաշտպանելու, ինչպես նաև սեփական մտքերը ճիշտ ձևակերպելու, ինքնաարտահայտվելու կարողություն: Դասի ընթացքում աշակերտները

- ծանոթանում են տեքստին,
- դուրս գրում անծանոթ բառերը և կատարում բառային աշխատանք,
- մեկնաբանում են տեքստը և փորձում հասկանալ տեքստի իմաստը,
- փաստարկում են իրենց ենթադրությունները՝ օգտագործելով իրենց անգլերենի իմացությունը:
- **Օգտագործված մեթոդներն ու տարրերը՝** Խճանկար(Ջիգսո) մեթոդը և համագործակցային ուսուցման բոլոր տարրերը:
- **Անհրաժեշտ նյութերը՝** տեքստի հատվածները,բառատետր,գունավոր գրիչներ

Դասի ընթացքը

- Աշակերտներին բաժանել հենակետային խմբերի՝ հանձնարարելով նրանց հաշվել մինչև 4-ը, որի արդյունքում 30 հոգանոց դասարանում ստացվեցին 7 հոգանոց խմբեր:
- Այնուհետև տալ տեքստի համապատասխան հատվածները արդեն ձևավորված խմբերին:
- Խմբերից յուրաքանչյուրը պետք է վերլուծի տեքստը և անի մակնաբանություններ, ինչպես նաև անծանոթ բառերը գունավոր գրիչների օգնությամբ գրանցի տետրում և բառատետրում: Աշխատանքը կատարելու համար աշակերտներին տրվում է 20 րոպե ժամանակ:
- Աշխատանքի վերջում խմբի անդամներից որևէ մեկը՝ պատահական կարգով ընտրված, պետք է ներկայացնի ողջ խմբի կատարած աշխատանքը:

- Այնուհետև պետք է քննարկվի տվյալ աշխատանքի լավ և վատ կողմերը հաջորդ անգամ դրանք շտկելու նկատառումով:

Գնահատել՝ հաշվի առնելով ինքնաարտահայտվելու, միմյանց հետ համագործակցելու, սեփական մտքերը ճիշտ ձևակերպելու կարողությունը ,թույլ տալ աշակերտներին գնահատել մյուս խմբերին, ինչպես նաև կարողանալ գնահատել սեփական խմբի ու իր կատարած աշխատանքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԴԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Կո՞ղմ եք դասի ավանդական անցկացմանը:

- Այո- 3%
- Ոչ- 96%
- Այլ պատասխաններ- 1%



2.Արդյո՞ք Ձեզ դուր է գալիս, երբ դասի ընթացքում օգտագործվում են զանազան մեթոդներ և խաղեր, հատկապես համագործակցային մերթոդը:

- Այո- 96%
- Ոչ- 4%
- Այլ պատասխաններ- 0%



3.Արդյո՞ք հեշտ ընկալեցիք անցկացված դասի էությունը համագործակցային մեթոդի օգնությամբ:

- Այո- 91%
- Ոչ- 4%

- Այլ պատասխաններ- 5%



4. Արդյո՞ք մեթոդը հեշտացրեց բացատրված նյութի ընկալման գործընթացը:

- Այո- 98%
- Ոչ- 0%
- Այլ պատասխաններ- 2%



5.Արդյո՞ք կար համագործակցության, վստահության և հավասարության մթնոլորտ ձեր խմբում:

- Այո- 94%
- Ոչ- 3%
- Այլ պատասխաններ- 3%



6.Արդյո՞ք կրկին կցանկանայիք աշխատել այս մեթոդով:

- Այո- 98%
- Ոչ- 0%
- Այլ պատասխաններ-2 %



7. Արդյո՞ք մեթոդը հետաքրքրություն և ակտիվություն առաջացրեց դասի ընթացքում:

- Այո- 99%
- Ոչ- 0%
- Այլ պատասխաններ-1 %



ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱՐՑՈՒՄ՝ Համագործակցային մեթոդը հանրակրթական դպրոցում անցկացնելու վերաբերյալ

1.Կո՞ղմ եք դասի ավանդական անցկացմանը:

- Այո- 3%
- Ոչ- 96%
- Այլ պատասխաններ- 1%

2.Արդյո՞ք ձեզ դուր է գալիս, երբ դասի ընթացքում օգտագործվում են զանազան մեթոդներ և խաղեր, հատկապես համագործակցային մերթոդը:

- Այո- 96%
- Ոչ- 4%
- Այլ պատասխաններ- 0%

3.Այսօրվա դասի անցկացման ձևն ու եղանակը արդյո՞ք ձեզ դուր եկավ:

- Այո- 92%
- Ոչ- 2%
- Այլ պատասխաններ- 6%

4.Արդյո՞ք հեշտ ընկալեցիք անցկացված դասի էությունը համագործակցային մեթոդի կիրառման օգնությամբ:

- Այո- 91%
- Ոչ- 4%
- Այլ պատասխաններ- 5%

5. Արդյո՞ք մեթոդը հեշտացրեց բացատրված նյութի ընկալման գործընթացը:

- Այո- 98%
- Ոչ- 0%
- Այլ պատասխաններ- 2%

6.Արդյո՞ք կար համագործակցության, վստահության և հավասարության մթնոլորտ ձեր խմբում:

- Այո- 94%
- Ոչ- 3%
- Այլ պատասխաններ- 3%

7. Արդյո՞ք մեթոդը հետաքրքրություն և ակտիվություն առաջացրեց դասի ընթացքում:

- Այո- 99%
- Ոչ- 0%
- Այլ պատասխաններ-1 %